


անգամ տեսեալ էր՝ իԼեւոն գփորձ եւ զօրինակ: Եւ ոչ զերեսս նորա կամեցաւ տեսանել թագաւորն, եւ յուզել զաղիս իւր, որ այնքան ամս կղկաթ կաթոզի լինէին՝ ինա՛ իբրեւ յորդի սիրոյ, գրկօք գգուեալ եւ յարքունի բարձս սնուցեալ, թագիւ պսակեալ եւ թագաւորութեան պատրաստեալ: Լիուլի տուեալ էր նմա բաժինս. եւ այլում ժառանգեցուցեալ զաթոռ իւր, եւ մնայր օր յօրէ դարձի դեսպանին իւրոյ՝ Ջօսլընի՝ տեառն Թլին Համտընոյ, յ՛ամէ հետէ առաքելոյ ընդ Անդրէի թագաւորի Ունգարաց յերկիր նորա, առ՝ իբերել զտղայ որդի նորին՝ ի փեսայութիւն դստեր իւրում Ջապելի, եւ՝ իթագակցութիւն: Ել Ռուբէն ունայնաձեռն յանմատոյց դրանց թագաւորին, եւ դիմեաց երթալ առ լիկաթ Քահանայապետին յԱսորիս կամ՝ իՏամիադ, եւ զնա ունել միջնորդ եւ պաշտպան.՝ իդ՛ւր:



նկար 231 Անտիոքեան դրամ կարծեցեալ Ջապլունի դստեր ԲԼեւոնի²³²:

²³² Այսպէս կարծեօք ասէ հրատարակողն դրամագէտ Շլումպերկեր. զի փոխանակ անուան
 , ի բնակողման
 կոչէր գոռոզ պայլուիին այն Կիպրոսի, կին զահասերն Ամաւրեայ. որք ընդերկար ամս
 վեր ՚ի վայր խռովեցին հակառակութեամբ գորակից պետութիւնս Կիպրացոց եւ Հայոց,
 եւ երկոքին եւս եղերական մահուամբ զրաւեցան. թերեւս ողբերգելի քան զայրն գտեալ
 Ջապլուն, անդրանիկն ՚ի ծնունդս բազմորդոյն Լեւոնի Բ, եւ յետ ամենայն եղբարցն
 բռնամահ լեալ ՚ի բանտի, ՚ի տիրազլուխ պայլութեան Օշնի տեառն Կոռիկոսի,՝ ի տիս
 սղայութեան գոլով Լեւոնի Դ: